«Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:»:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխմանը՝ դատարան դիմելու համար պետական տուրքի հարցին, գտնում է, որ այն պետք է համարել լուծված հայցը մերժված լինելու պարագայում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:»:

Շարադրվածը ընդունելով հիմք և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188, 189, 191, 192 հոդվածներով, դատարանը՝

ՎՃՌԵՑ

1. Ըստ հայցի «Պրոֆշին 2020» ՍՊ ընկերության ընդդեմ Միասնական սոցիալական ծառայության՝ Միասնական սոցիալական ծառայության 14.11.2022 թվականի թիվ Ա/Ռ-2՝ «Պրոֆշին 2020» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3.Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4.Կիրառված հայցի ապահովման միջոցները վերացնել սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.

Սույն վճիռը մտել է օրինական ուժի մեջ թվականի _____-ին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ